



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԵՔ ԹԵՄԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ԵՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԺՈՂՈՎ

23 եւ 24 Յուլիսին, Բանատայի Թեմի Ազգային Առաջնորդարանին մէջ, Մոնթրեալ, գումարուեցաւ Հիւսիսային Ամերիկայի երեք Թեմերու Առաջնորդներու եւ Ազգ. Վարչութեանց ատենապետներու ժողովը:

Ժողովի ակարտին հրատարակուեցաւ հետեւեալ հաղորդագրութիւնը.-

Չորեքշաբթի եւ Հինգշաբթի, Յուլիս 23-ին եւ 24-ին, Բանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանը հիւրընկալեց Հիւսիսային Ամերիկայի երեք Թեմերու Առաջնորդներն ու Ազգային Վարչութեանց Ատենապետները:

Ժողովին մասնակցեցան Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Օշական Արք. Զօլոյեան, Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Բանատայի Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեան, ինչպէս նաեւ Ազգային Վարչութեանց ատենապետները՝ Պրն. Ճէք Մարտոյեան, Արեւելեան շրջանէն, Տոքթ. Կարօ Յակոբեան Արեւմտեան շրջանէն եւ Տոքթ. Ժան Առաքելեան, Բանատայի շրջանէն:



շրջանէն:

Ներկայ եղան Բանատայի Թեմի Ազգային Վարչութեան անդամներ՝ Տոքթ. Կարպիս Հարպոյեան, Պրն. Սիմոն Փօլատեան եւ Տիկին Օսիկ Միսիարթիսեան:

Ժողովը գլխաւորաբար անդրադարձաւ Հայց. Առաքելական եկեղեցւոյ առաքելութենէն բխող աշխատանքի դաշտերուն, յատկապէս նկատի ունենալով մեր ժողովուրդին հոգեմտաւոր պահանջները եւ հետեւեալ աշխատանքային դաշտերը.-

Կրօնական Դաստիարակութիւն, Երիտասարդական, Կրօնական Հրատարակութիւններ, սարկաւազաց եւ դպրաց պատրաստութիւն, ծովխերու վերակազմակերպում եւ կոր ծովներ, Հայեցի Դաստիարակութիւն, Կաթողիկոսարան եւ թեմեր, միջ-թեմական յարաբերութիւններ, Կիլիկեան

Թեմի 50-ամեակ, Ղեռնդեանց Համագումար, Ամուսնալուծում եւ եկեղեցի, Միասեռականությունը եւ եկեղեցին, միջ-եկեղեցական եւ միջ-կրոնական յարաբերություններ, եւ ի վերջոյ, յառաջիկայ Դեկտեմբերին տեղի ունենալիք Ազգային Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի հարցերը:

Վերոյիշեալ հարցերուն հետապնդման համար, մշակուեցան ծրագիրներ եւ աշխատանքի ուղեգիծ, որոնց հետամուտ պիտի ըլլան նշանակուած յանձնախումբերը:

## **MEETING OF THE PRELATES AND CHAIRMEN OF THE THREE NORTH AMERICA PRELACIES**

Earlier this week, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Dr. Garo Agopian, Chairman of the Executive Council, departed for Montreal, Canada, to participate in the meeting of the North American Prelates and Executive Council Chairmen.

The meeting convened on Wednesday, July 23<sup>rd</sup>, with the participation of the Prelate, H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, H.E. Archbishop Khajag Hagopian, Prelate of Canada, and Executive Council Chairmen Dr. Garo Agopian (Western Prelacy), Mr. Jack Mardoian (Eastern Prelacy), and Dr. John Arakelian (Canada Prelacy). Executive Council members from the Canadian Prelacy Dr. Garbis Harboyan, Mr. Simon Poladian, and Mrs. Osig Mkhsi-Artinian also participated in the meeting.

During the meeting, the Prelates and Chairmen discussed issues of mutual concern to all three Prelacies such as Christian Education, youth activities, religious publications, training of deacons and altar servers, expansion of parishes, Armenian subjects' instruction and education, inter-Prelacy collaboration, 50<sup>th</sup> anniversary of the Catholicosate of Cilicia Prelacy in North America,



Ghevontians clergy conference, ecumenical relations, and matters relating to the General Assembly which will take place in December.

## **ԼԻԶՊՈՆԻ ՀԻՆԳ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 25-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ**

Կիրակի, 27 Յուլիսին, Կլենտոյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. Պատարագին պիտի հանդիսապետէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը պիտի փոխանցէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Սարսիրոսեան:

Ինչպես ծանօթ է, նոյն օրը, Լիզպոնի հինգ հերոսներուն նահատակութեան 25րդ տարեդարձն է:

Առաջնորդ Սրբազան Զօր տնօրինումով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգիստեան յատուկ արարողութիւն պիտի կատարուի հինգ նահատակներուն յիշատակին:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, կէսօրէ ետք ժամը 1-ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ Համաժողովրդային ոգեկոչում-հաւաք, նուիրուած Լիզպոնի հերոսներու նահատակութեան 25-ամեակին: Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ յուշահանդէսին:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. Պատարագին, լսելու Առաջնորդ Սրբազանին պատգամը եւ հաղորդուելու օրուան խորհուրդով, ապա նաեւ, ներկայ ըլլալու Ոգեկոչման հաւաքին, յարգելու համար յիշատակը Լիզպոնի 5 հերոսներուն:

Աւելի ուշ, երեկոյեան ժամը 6-ին, Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ եւ բացման աղօթքը պիտի կատարէ Հայ Մշակութային Հիմնարկութեան տարեկան ձեռնարկին, որ տեղի պիտի ունենայ Beverly Wilshire պանդոկին մէջ: Ներկայ պիտի ըլլան նաեւ Ազգ. Վարչութեան անդամներ:

## **PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AND LISBON 5 COMMEMORATION AT ST. MARY'S CHURCH IN GLENDALE**

On Sunday, July 27<sup>th</sup>, the Prelate will preside over Divine Liturgy and deliver the sermon at St. Mary's Church in Glendale.

Given that July 27 is the 25<sup>th</sup> anniversary of the Lisbon 5, by the ordinance of the Prelate prayers will be offered during requiem service in all Prelacy Churches. The Prelate will preside over the requiem service immediately following Divine Liturgy, as well as over the commemoration to honor the memory of the Lisbon 5 to take place at 1:00 p.m. at "Armenag Der Bedrossian" Hall.

Later in the evening the Prelate will offer the invocation at the annual banquet of the Armenian Cultural Foundation at the Beverly Wilshire Hotel. Executive Council members will also be in attendance.

## **2 ՕԳՈՍՏՈՍԻՆ, ԿԻՐԱԿՄՈՒՏՔԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ**

Շաբաթ, 2 Օգոստոսին, Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ Կիրակմուտքի ժամերգութիւն տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամը 6-ին, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր եւ մասնակցութեամբ եկեղեցականաց դասուն:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը եւ յատկապէս երիտասարդութիւնը, որ հաւատքով մասնակցի Կիրակամտից ժամերգութեան եւ հաղորդուի օրուան խորհուրդով:

## **EVENING SERVICES AT THE PRELACY CHAPEL**

On Friday, August 2<sup>nd</sup>, the Prelate will preside over Evening Services at the “St. Dertad and St. Ashkhen” Chapel. Clergy members will participate in the service which will begin at 6:00 p.m.

We invite our faithful parishioners and especially our youth to participate in these uplifting services.